

Յեղափոխական: Չէր Սեդոն: Բայց տարուեցաւ, սա քաղաքէն հեռանալու փրկարար պատկերով: Չունեցաւ անիկա տարրական գիտակցութիւնը այն բազմազան, յաճախ մահ տանող վտանգներուն, որոնք անխուսափելի կերպով կը դառնան ճամբորդի փէշերուն, երբ հայ ըլլան անոնք ու յանդգնին ոտք նետել դուրս իրենց քաղաքէն: Հոս, ճամբաներու այս աղէտը կերպով մը օրինակումն էր անդին քուրդերով ստեղծուած սարսափին: Չունէր թափանցումն ալ Մաթիկին նպատակներուն, զոր կը ճանչնար իբր շրջիկ ատամնաբոյժ, ինչպէս՝ քաղաքին հանճարեղ կառավարիչը կը վկայէր «բանիւ եւ գործով»: Մնաց որ, ընկեր Մաթիկը եղաւ զգոյշ «տեղւոյն» ազգայիններուն հետ իր յարաբերութեանցը մէջ: Բնազդակա՛ն, այս կեցուածքը: Վասնզի անիկա չէր հաւատար, թէ իր մայրենի լեզուն ուրացող ժողովուրդ մը կարող ըլլար զայն սիրելու: Առանց բերնի ուտել մը ըմբռնելի՞: Սիրելու համար զգայարանքներ են հարկաւոր: Այս քիչ մը շատ արմատական վճիռը միակողմանի կը թուի, երբ նկատի առնենք միւս պարագան.՝ ցեղայն աղդակներէն երկրորդին, այսինքն՝ կրօնքին ալ արժէքը: Ոչ մէկ տեղ մեր եկեղեցին այնքան խորունկ գուրգուրանքի արժանացած է, որքան ոչ-հայախօս գաւառներուն մէջ: Այդ զգացումը մերինները տարած է մինչեւ չափազանցումը: Բոլոր աստուածատեսները, բուհիւնները թրքախօս քաղաքներու նուէրներն են տակաւին մինչեւ այսօր:

Մաթիկը չայցելեց վարժարան: Բայց կանչուեցաւ ծերունազարդ առաջնորդէն, որ մեծագործ եպիսկոպոս մըն էր, հին սերունդէն:

Մաթիկը չահեկան մերձեցումները ըրաւ արմաշական տիպարին ու հին ոճի այդ եկեղեցականին ընդմէջ: Իր հովուած ժողովուրդին նման ինքնատիպ երակ ունէր այդ մարդը ու խորունկ ազդեցութիւնը թուրքերուն վրայ: Չէր կրցած արգիլել ջարդերը, վասնզի հրամանը եկած էր բարձրէն, բայց երկու ժողովուրդներու յարա-